

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Բնական աշխարհահամակարգ է:

- 1) ճահիճը
- 2) քաղաքը
- 3) ջրամբարը
- 4) արոտավայրը

2


Ընտրել մոլորակների ճիշտ շարքը՝ ըստ Արեգակից ունեցած հեռավորության:

- 1) Փայլածու, Երկիր, Արուսյակ, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 2) Արուսյակ, Փայլածու, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 3) Փայլածու, Արուսյակ, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 4) Հրատ, Փայլածու, Երկիր, Արուսյակ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան

3

Նկար 1- ում պատկերված է.

- 1) լեռնագիծ
- 2) հորիզոնական
- 3) համադրման սանդղակ
- 4) ռելիեֆի կտրվածք՝ պրոֆիլ



նկար 1

4

Հյուսիսային կիսագնդում ծառի կամ քարի ո՞ր կողմն է առավել շատ մամուկալաված.

- 1) հյուսիսային
- 2) արևելյան
- 3) հարավային
- 4) արևմտյան

5

Արեգակի շուրջը պտտվելիս Երկիրը մերձակետում լինում է.

- 1) հունվարի 3-ին
- 2) հուլիսի 5-ին
- 3) մարտի 21-ին
- 4) հունիսի 22-ին

6

1 : 900 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 4 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.

- 1) 3,6 կմ
- 2) 36 կմ
- 3) 360 կմ
- 4) 3600 կմ

7

Ի՞նչ ծագման ապարներ են պեմզան ու պեռլիտը:

- 1) հրային
- 2) փոխակերպային
- 3) օրգանական նստվածքային
- 4) անօրգանական նստվածքային


8

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Աշխարհագրական թաղանթի առաջացման և զարգացման ամբողջ ընթացքը բաժանվում է 3 փուլի՝ երկրաբանական, կենսաբանական, մարդածին:
- 2) Հարթավայրեր առաջանում են ջրիկ մագմայի արտահոսման պատճառով:
- 3) Ծալքաբեկորավոր լեռներն առաջացել են տեկտոնական շարժումների հետևանքով:
- 4) Երկրագնդի վրա առավել հաճախ երկրաշարժեր լինում են պլատֆորմներում:

9

Նկար 2 – ում ո՞ր թվով է նշված հարավային բարեխառն ջերմային գոտին:



նկար 2

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

10

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Եվրասիայի արևմտյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Հյուսիսատլանտյան ծովային հոսանքը:
- 2) Հարավային Ամերիկայի արևմտյան ափերի կլիմայի վրա բացասական ազդեցություն ունի Պերուական ծովային հոսանքը:
- 3) Եվրասիայի արևելյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Կուրոսիո ծովային հոսանքը:
- 4) Աֆրիկայի արևելյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Մոմալիական ծովային հոսանքը:

11

Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 15 մ² է, ջրի արագությունը՝ 2 մ/վ: Որքա՞ն է գետի ջրի ծախսը:

- 1) 7,5 մ³/վ
- 2) 30 մ³/վ
- 3) 9,5 մ³/վ
- 4) 45 մ³/վ

12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հուանհե ու Յանցզի գետերը հորդանում են աշնանը:
- 2) Ամազոն և Կոնգո գետերը հորդանում են գարնանը:
- 3) Ամուդարյա և Սիրդարյա գետերը հորդանում են ամռանը:
- 4) Եփրատ և Տիգրիս գետերը հորդանում են ձմռանը:

13

Բնության բաղադրիչների ո՞ր զուգորդությունն է ճիշտ:

- 1) տափաստան-կարմրահող-փետրախոտ, սիզախոտ
- 2) անապատ-սևահող-օշինդր, ուղտափուշ
- 3) տունդրա-կմախքային հող-լորենի, հացենի
- 4) տայգա-պողոզլային հող-եղևնի, սոճի

14


Ինչպե՞ս է կոչվում ներկայիս երկրաբանական դարաշրջանը:

- 1) Պրոտերոզոյան
- 2) Կայնոզոյան
- 3) Մեզոզոյան
- 4) Արխեյան

15

Մակրնթացության և տեղատվության հերթափոխը աշխարհագրական թաղանթի ո՞ր հատկանիշն է արտահայտում:

- 1) գոտիականություն
- 2) միասնականություն
- 3) ռիթմիկություն
- 4) զոնայականություն



քարտեզ 1

16

Քարտեզ 1-ում ո՞ր կղզին է նշված Բ տառով:

- 1) Կրետե
- 2) Սիցիլիա
- 3) Կիպրոս
- 4) Սարդինիա

17

Քարտեզ 1-ում ո՞ր գետն է նշված Գ տառով:

- 1) Ինդոս
- 2) Ճորոխ
- 3) Տիգրիս
- 4) Եփրատ

18

Ո՞ր շարքում են Եվրասիայի լճերը դասավորված արևմուտքից արևելք ճիշտ հերթականությամբ:

- 1) Լադոգա, Սևան, Արալ, Բալխաշ
- 2) Սևան, Լադոգա, Բալխաշ, Արալ
- 3) Բալխաշ, Լադոգա, Սևան, Արալ
- 4) Արալ, Սևան, Լադոգա, Բալխաշ

19

Հարավային Ամերիկայի հարթավայրերից ո՞րն է սարահարթ:

- 1) Օրինոկոյի
- 2) Լա Պլատայի
- 3) Պատագոնիայի
- 4) Ամազոնի

20

Հյուսիսային Ամերիկա մայրցամաքի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Առավել մեծ տարածում ունեն անապատներն ու կիսաանապատները:
- 2) Տոռնադոն հատկապես մեծ ավերածություններ է առաջացնում Կենտրոնական Ամերիկայում:
- 3) Կենտրոնական մասում հատկապես արևմուտքից արևելք տարածվում են անտառատափաստաններն ու տափաստանները:
- 4) Մեծ Ավազան սարահարթում տարածվում են կիսաանապատային ու անապատային լանդշաֆտները:

21


Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Նեղոսը հոսում է միայն հասարակածային, մերձհասարակածային և մերձարևադարձային գոտիներով:
- 2) Սպիտակ և Կապույտ Նեղոսները միախառնվում են Ասուան քաղաքի մոտ:
- 3) Նեղոսի հովիտը Մահարայի ամենախոշոր և հնագույն օազիսն է:
- 4) Նեղոսը ստորին հոսանքում լեռնային գետ է:

22

Ո՞ր կլիմայական գոտում է գտնվում Գ բնակավայրը՝ ըստ նկար 3-ի:

- 1) հասարակածային
- 2) հարավային մերձհասարակածային
- 3) հյուսիսային բարեխառն
- 4) հարավային մերձարևադարձային



նկար 3

23

Բնութագրումով որոշել մայրցամաքը:

Ամենաշոր մայրցամաքն է: Այստեղ բացակայում են բարձր լեռները, սառցադաշտերը և գործող հրաբուխները: Ո՞ր մայրցամաքի մասին է խոսքը:

- 1) Աֆրիկա
- 2) Ավստրալիա
- 3) Անտարկտիդա
- 4) Հարավային Ամերիկա

24

Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի երրորդ փուլի կարևոր իրադարձությունն չէ:

- 1) Հնդկաստանի անկախացումը
- 2) Գերմանիայի վերամիավորումը
- 3) Չեխոսլովակիայի տրոհումը
- 4) Հարավսլավիայի փլուզումը

25

Ո՞ր տարածաշրջանին են առավել շատ բնորոշ երկրաչափական ու աշխարհագրական սահմանները:

- 1) Հարավարևելյան Ասիա
- 2) Եվրոպա
- 3) Լատինական Ամերիկա
- 4) Աֆրիկա

26

Ընտրել «պետություն-կառավարման ձև» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|-------------|-----------------------------------|
| 1. Կատար | ա. նախագահական հանրապետություն |
| 2. Դանիա | բ. բացարձակ միապետություն |
| 3. Գերմանիա | գ. սահմանադրական միապետություն |
| 4. Բրազիլիա | դ. խորհրդարանական հանրապետություն |

- 1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
- 3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
- 4) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ

27

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ են ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը, ցածր բնական աճը:
- 2) «Ժողովրդագրական պայթյունը» բնութագրվում է բնակչության դանդաղ աճով և բնորոշ է զարգացած երկրներին:
- 3) Բնակչության կտրուկ աճի հետևանքով զարգացած երկրներում ստեղծվել է «ժողովրդագրական ճգնաժամ»:
- 4) Բնակչության վերարտադրությունը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններով:

28

Բազմազգ պետություն է.

- 1) Ճապոնիան
- 2) Հնդկաստանը
- 3) Իտալիան
- 4) Հայաստանը

29

«Մշակաբույս-առաջատար երկիր» գույգերից ընտրել սխալը.

- 1) բրինձ-Չինաստան
- 2) ձիթենի-Իսպանիա
- 3) եգիպտացորեն-ԱՄՆ
- 4) շաքարեղեգ-Ուկրաինա

30

Ո՞րն է Կանադայի մայրաքաղաքը:

- 1) Գվատեմալա
- 2) Օտտավա
- 3) Մանագուա
- 4) Հավանա

31

Ո՞ր գետը չ/ հոսում Ֆրանսիայի տարածքով:

- 1) Ռոնը
- 2) Լուարը
- 3) Սենը
- 4) Օդերը

32

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Սև և գունավոր մետաղաձուլությունը հիմնականում կենտրոնացված է նավահանգստային քաղաքներում:
- 2) Խոշոր քաղաքներից են Մանչեստրը և Մայնի Ֆրանկֆուրտը:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 4) Տեքստիլ արդյունաբերության խոշորագույն կենտրոնը Բիրմինգհեմ քաղաքն է:

33

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկիրը հարուստ է ջրային ու անտառային ռեսուրսներով:
- 2) Հարավկասպիական դաշտավայրը երկրի ամենաչոր շրջանն է:
- 3) Երկրի կենտրոնական շրջաններում գյուղատնտեսության հիմքը ոռոգովի երկրագործությունն է:
- 4) Կասպից ծովի ափամերձ շրջաններում գլխավոր մշակաբույսը փյունիկյան արմավենին է:

34

Ո՞ր երկիրը աշխարհում առաջատար չէ մեղվաբուծության արտադրանքի ծավալով:

- 1) ԱՄՆ
- 2) Մեքսիկա
- 3) Ռուսաստան
- 4) Սաուդյան Արաբիա

35

Ո՞ր պետությունները Լատինական Ամերիկայում *չեն* գտնվում:

- 1) Լիբիան և Մարոկկոն
- 2) Արգենտինան և Չիլին
- 3) Կուբան և Գվատեմալան
- 4) Պարագվայը և Բրազիլիան

36

Ո՞ր տարածաշրջաններում է տարածվում անագի գոտին:

- 1) Հարավային և Արևելյան Աֆրիկա
- 2) Հյուսիսային և Հարավային Եվրոպա
- 3) Լատինական և Հյուսային Ամերիկա
- 4) Հարավարևելյան և Հարավային Ասիա

37

ԱՄԵԱՆԻ - ի անդամ երկրներ են.

- 1) Ինդոնեզիան և Սինգապուրը
- 2) Չինաստանը և Վրաստանը
- 3) Ավստրալիան և Թուրքիան
- 4) Ռուսաստանը և Ճապոնիան

38

Բնակչության թվով գերիտոշոր երկիր է.

- 1) Ավստրալիան
- 2) Պերուն
- 3) Մեքսիկան
- 4) Գանան

39

ԱՄՆ - ին են պատկանում.

- 1) Բահամյան կղզիները
- 2) Հավայան կղզիները
- 3) Կուրիլյան կղզիները
- 4) Ֆոլկլենդյան կղզիները

40


Լատինական Ամերիկայի տեղաբնիկ ժողովուրդներից *չեն*.

- 1) մայաները
- 2) ացտեկները
- 3) ինկերը
- 4) բուշմենները

41

«Լճեր-գոգավորության ծագում» գույզերից ընտրել *սխալը*:

- 1) Փարվանա, Խանչալի-հրաբխային
- 2) Քարի, Սև-սառցադաշտային
- 3) Սևանա, Վանա-տեկտոնահրաբխային
- 4) Ուրմիա, Ակնա-սողանքապատվարային



քարտեզ 2

42

Քարտեզ 2-ում n° ը լեռնաշղթան է նշված Բ տառով:

- 1) Վայքի
- 2) Զանգեզուրի
- 3) Մեղրու
- 4) Բարգուշատի

43

Քարտեզ 2-ում n° ը լեռնանցքն է նշված Դ տառով:

- 1) Սևանի
- 2) Որոտանի
- 3) Վարդենյաց
- 4) Քաջարանի

44

Հրաբխային լեռնագագաթների ո՞ր զույգն է գտնվում Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասում:

- 1) Վարդենիս, Իշխանասար
- 2) Արագած, Աժդահակ
- 3) Աբուլ, Ծաղկավետ
- 4) Սրմանց, Սիփան

45

Մերձալպյան և ալպյան մարգագետիններում մեծ տարածում ունեն.

- 1) օշինդրը, աղածաղիկը, ուղտափուշը
- 2) փետրախոտը, շյուղախոտը, կորնգանը
- 3) գայլաթաթը, երեքնուկը, անմոռուկը
- 4) մասրենին, գազը, աբեղախոտը

46

Արարատյան դաշտի գրունտային ջրերի բարձր մակարդակը ո՞ր հողերի առաջացման պատճառ է:

- 1) աղուտ-ալկալի
- 2) լեռնաշագանակագույն
- 3) կիսաանապատային գորշ
- 4) մարգագետնատափաստանային

47

Արմավիրի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ առավել խտաբնակ մարզերից է:
- 2) Մեծ է գյուղական բնակչության տեսակարար կշիռը:
- 3) Մարզկենտրոնը մարզի ամենամեծ քաղաքն է:
- 4) Բնակչության խտությունը արևմուտքից արևելք շարժվելիս նվազում է:

48

ՀՀ տուֆի արդյունահանման խոշոր կենտրոն է.

- 1) Ապարանը
- 2) Թալինը
- 3) Մարալիկը
- 4) Արթիկը

49

ՀՀ-ում մետաղական այլումինի արտադրությանն առավելապես նպաստել է.

- 1) նեֆելինային սիենիտների հարուստ պաշարների առկայությունը
- 2) Սևան-Հրազդան ջրեկների կասկադի կառուցումը
- 3) տնտեսության տարբեր ճյուղերի կողմից այլումինի պահանջարկի մեծացումը
- 4) գունավոր մետաղաձուլության տարբեր ճյուղերի զարգացումը

50

ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 2) Հացահատիկային ցանքատարածություններում գերակշռում է աշնանացան ցորենը:
- 3) Խաղողի մշակության վերին սահմանը 2100-2200 մ բացարձակ բարձրություններն են:
- 4) Ծիրանենու մշակության գլխավոր շրջաններից է Լոռվա սարահարթը:

51

Բնական ռեսուրսների ընդհանուր քանակի (պաշարների) հարաբերակցությունը դրանց տարեկան օգտագործման քանակին կոչվում է.

- 1) ռեսուրսների տնտեսական գնահատում
- 2) ռեսուրսաապահովվածություն
- 3) ռեսուրսների ռացիոնալ օգտագործում
- 4) ռեսուրսախնայողություն

52

Ո՞ր շարքի բոլոր երկրներն են բնական ռեսուրսների պաշարների առավել մեծ բազմազանությամբ:

- 1) Ճապոնիա, Գերմանիա, Ավստրալիա
- 2) Ֆրանսիա, Իտալիա, Բելառուս
- 3) Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան
- 4) Կանադա, ԱՄՆ, Չինաստան

53

Բնական միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության օրինակ է.

- 1) լանջերի դարավանդավորումը
- 2) բաց եղանակով շինանյութերի հանույթը
- 3) անտառաշերտերի ստեղծումը
- 4) ջրի օգտագործման փակ ցիկլերի ներդրումը

54

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնապահպանության ոլորտում երկկողմ և բազմակողմ միջպետական համագործակցության առաջին փորձն արել են Աֆրիկայի երկրները:
- 2) Սահմանային և տարանցիկ գետերի օգտագործումն ու պահպանությունը ամեն երկիր կազմակերպում է ինքնուրույն:
- 3) «Միջազգային Կարմիր գրքի» կազմման և հրատարակման աշխատանքները գլխավորում է Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միությունը(ԲՊՄՄ):
- 4) ՄԱԳԱՏԷ-ն զբաղվում է հողերի էրոզիայի դեմ պայքարի հիմնախնդրով:

55

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՄԱԿ-ի մասնագիտացված բնապահպանական կազմակերպություն է ՅՈՒՆԵՊ-ը:
- 2) Տեղային էկոլոգիական աղետները շրջակա միջավայրի համամոլորակային փոփոխությունների պատճառ դառնալ չեն կարող:
- 3) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
- 4) Աշխարհի խոշոր արդյունաբերական շրջաններին բնորոշ են սնոգը, թթվային անձրևները, աղմկային աղտոտումը:

56

Գրել այն հրաբուխների համարները, որոնք Եվրասիայում են.

- | | |
|-------------|--------------|
| 1) Հեկլա | 5) Էրբեբուս |
| 2) Կամերուն | 6) Ֆուձիյամա |
| 3) Դեմավենդ | 7) Կրակատաու |
| 4) Կոտոպախի | 8) Ռուխս |

57

Գրել այն սարքերի համարները, որոնցով չափում են մթնոլորտային երևույթներ.

- | | |
|---------------|----------------|
| 1) սելամոզրաֆ | 5) անեմոմետր |
| 2) բարոմետր | 6) էխոլոտ |
| 3) կուրվիմետր | 7) պալետկա |
| 4) ֆլյուզեր | 8) կողմնացույց |

58

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Հնդկական օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------------|----------------------|
| 1) Բրազիլական | 5) Գոլֆստրիմ |
| 2) Գվիանական | 6) Արևելաավստրալական |
| 3) Ասեդի հրվանդանի | 7) Մոզամբիկի |
| 4) Մուսսոնային | 8) Գվինեական |

59

Գրել Ճապոնական կղզեխմբի կղզիների համարները.

- | | |
|-------------------|-------------|
| 1) Ճամայկա | 5) Սիկոկու |
| 2) Նյուֆաունդլենդ | 6) Կյուսյու |
| 3) Հոկայդո | 7) Սախալին |
| 4) Կուրա | 8) Հոնսյու |

60

Գրել այն երկրների համարները, որոնք ԽՍՀՄ-ի կազմում չեն եղել.

- | | |
|--------------|--------------|
| 1) Վրաստան | 5) Էստոնիա |
| 2) Բուլղարիա | 6) Սլովակիա |
| 3) Մոլդովա | 7) Լատվիա |
| 4) Սլովենիա | 8) Տաջիկստան |

61

Գրել Կուրի ավազանին պատկանող վտակների համարները.

- | | |
|-------------|--------------|
| 1) Գետիկ | 5) Հրազդան |
| 2) Որոտան | 6) Խաչենագետ |
| 3) Մարմարիկ | 7) Փամբակ |
| 4) Արփա | 8) Դեբեդ |

62

ՀՀ տրված ջրամբարների համարները դասավորել դրանց ջրի ծավալների աճման կարգով.

1. Սպանդարյանի 2. Ախուրյանի 3. Կեչուտի

63

Տրված են երկրագնդի ներքին կառուցվածքի մասերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենաստորին շերտից.

1. երկրակեղև 2. միջուկ 3. միջնապատյան 4. ասթենոսֆերա

(64-65) Պետության բնակչության թիվը 40 մլն է: Գյուղաբնակների բացարձակ թիվը 16 մլն մարդ է, իսկ տարածքի մակերեսը՝ 200 000 կմ²:

64 Որոշել բնակչության միջին խտությունը:

65 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

66 Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ գագաթին՝ 330: Որոշել Լեռան բացարձակ բարձրությունը:

67 Քեյվիթաուն քաղաքի (Հարավաֆրիկյան Հանրապետություն) միջին ամսական ջերմաստիճանների աղյուսակն է.

| Միջին ամսական ջերմաստիճանը (°C) | | | | | | | | | | | |
|---------------------------------|------|------|------|------|-------|-------|------|-------|-------|------|-------|
| հունվ. | փետ. | մարտ | ապր. | մայ. | հուն. | հուլ. | օգ. | սեպտ. | հոկտ. | նոյ. | դեկտ. |
| 21,2 | 21,5 | 20,3 | 17,5 | 15,1 | 13,3 | 12,5 | 13,2 | 14,5 | 16,3 | 18,3 | 20,3 |

Որոշել Քեյվիթաուն քաղաքի ձմեռային միջին ջերմաստիճանը:

68

Որոշել ցորենի ցանքատարածությունների մակերեսը(հա), եթե ցորենի համախառն բերքը 24000 տ է, իսկ միջին բերքատվությունը՝ 40 ց/հա:

69

Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը:
- 2) Հարուստ է ածխի ու երկաթաքարի պաշարներով:
- 3) Մանդի արդյունաբերությունը զարգանում է ներկրվող հումքի հիման վրա:
- 4) Աշխարհի առաջատար երկրներից է պարարտանյութերի և ցեմենտի արտադրությամբ:
- 5) Մետաղաձուլական շրջանները հիմնականում տեղաբաշխված են երկրի արևմտյան շրջաններում:
- 6) Թեթև արդյունաբերության խոշոր կենտրոնը Շանհայն է:

70

Կոտայքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Գորգերի արտադրանքով հանրապետության առաջատար մարզերից է:
- 2) Թռչնաբուծությունն անասնապահության առաջատար ճյուղերից է:
- 3) Արտաքին հաղորդակցությունն իրականացվում է միայն արևմուտքից արևելք ուղղությամբ:
- 4) Ընդերքն աղքատ է մետաղային օգտակար հանածոներով:
- 5) Այս մարզում են Հատիս և Արայի լեռների հրաբխային կոները:
- 6) Մեքենաշինության առաջատար ճյուղերից են հաստոցաշինությունը և սարքաշինությունը: